

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հաստատված է՝
«ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի 20.12.2017թ. 26/4-Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան



Ծ Ր Ա Գ Ի Ր

**Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի 2018 - 2021 թվականների
ռազմավարության**

ք. Երևան,
«20» դեկտեմբերի 2017թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
■ Նախաբան	4
■ Ինստիտուցիոնալ արժեքներ	4
■ Փաստաբանների պալատի խնդիրները (նպատակները)	5
■ Փաստաբանների պալատի տեսլականը	5
■ Փաստաբանների պալատի առաքելությունը	6
2018 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ	
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
ԳԼՈՒԽ I. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ	
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	7
ԳԼՈՒԽ II. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ	
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	7
ԳԼՈՒԽ III. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ	
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ	7
ԳԼՈՒԽ IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ	
ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ)	
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	8
■ Հանրային պաշտպանության ինստիտուտի հետագա	
զարգացման և բարեփոխումների իրականացման ապահովում	8
■ ՀՊԳ հեղինակության բարձրացում	8
■ ՀՊԳ պաշտպանների մասնագիտական որակների	
բարձրացում և շարունակական վերապատրաստման	
ապահովում	9
■ Անվճար իրավական օգնության տրամադրման	
այլընտրանքային համակարգերի ներդրում	9
■ ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և	
հաշվետվողականության բարձրացում	9
ԳԼՈՒԽ V. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ	
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	10
ԳԼՈՒԽ VI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ	
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	10
■ Փաստաբանների իրավունքների պաշտպանությանն	
ուղղված միջոցառումներ	10
■ Փաստաբանի մասնագիտական պարտականությունների	
կատարման խոչընդոտների վերացում	10
■ Փաստաբանական գործունեությանն ու փաստաբանների	
միասնականության ամրապնդմանն առնչվող	
այլ միջոցառումներ	11



ԳԼՈՒԽ VII. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ	11
■ Փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների ակումբի ստեղծում	11
■ Փաստաբանական գործունեություն իրականացնելիս ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում	12
■ Փաստաբանական գրասենյակների էքսպո-ցուցահանդեսի կազմակերպում	12
ԳԼՈՒԽ VIII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	12
ԳԼՈՒԽ IX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ	13
ԳԼՈՒԽ X. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	13
■ Մասնագիտական էթիկայի չափորոշիչների համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին	13
■ Փաստաբանի վարքագծի կանխատեսելիությանն ուղղված միջոցառումների իրականացում	13
ԳԼՈՒԽ XI. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	14
ԳԼՈՒԽ XII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՁՐԱՑՈՒՄ	14
ԳԼՈՒԽ XIII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱԴԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ	14
ԳԼՈՒԽ XIV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	15
ԳԼՈՒԽ XV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	15
■ Շարունակական բնույթ կրող հասարակական ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում	15
■ Անդամավճարների հետ կապված հարցեր	16

* * *



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

❖ **Նախաբան.**

Սույն ռազմավարական ծրագիրն ուրվագծում է Հայաստանի Հանրապետության փաստաբաններ պալատի (**այսուհետ նաև Փաստաբանների պալատ**) 2018-2021 թվականների գործունեության հիմնարար ուղղությունները՝ ելակետ ունենալով փաստաբանության զարգացման հեռանկարը:

Ծրագրում սահմանված են Փաստաբանների պալատի հայեցակարգային մոտեցումները, որոնք կողմնորոշելու են նրա առաջիկա գործունեությունը և ուղղված են «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (**այսուհետ նաև Օրենք**), ինչպես նաև կանոնադրությամբ Փաստաբանների պալատի առջև դրված խնդիրների և նպատակների իրականացմանը:

Սույն ծրագրում փորձ է արվել վեր հանել Փաստաբանների պալատի և փաստաբանների առջև ծառայած թե՛ ներքին և թե՛ արտաքին խնդիրները, ինչպես նաև հնարավորինս կանխատեսել այն խոչընդոտները, որոնք կարող են ի հայտ գալ Փաստաբանների պալատի և փաստաբանների գործունեության ընթացքում:

Ծրագիրը մշակվել է նաև հիմք ընդունելով Փաստաբանների պալատի խորհրդի 25.12.2014թ. թիվ 37/4-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2015-2017 թվականների ռազմավարության ծրագրի որոշ դրույթներ, որոնք շարունակական բնույթ են կրում և մշտապես արդիական են:

❖ **Ինստիտուցիոնալ արժեքներ.**

Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի կարևորագույն ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների կողմից Օրենքի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև Կանոնագիրք**) սկզբունքների պահպանումը՝ նկատի ունենալով նաև այն, որ փաստաբանը՝ որպես հանրային անձ հատուկ դեր է ստանձնում հասարակության մեջ, քանի որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն իր վստահորդների հանձնարարականների կատարմամբ:

Նշվածի հաշվառմամբ Փաստաբանների պալատը հարկ է համարում հատկանշելի հետևյալ սկզբունքները, որոնց՝ որպես հիմնարար արժեքների, պահպանումը կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի առաքելության և տեսլականի իրագործման համար: Այդ սկզբունքներն են՝

✓ օրինականությունը,



- ✓ փաստաբանական գործունեության ազատությունը և անկախությունը,
- ✓ փաստաբանների հավասարությունը և նրանց դեմ ուղղված խտրականության արգելումը,
- ✓ փաստաբանական գործունեությանը չմիջամտելը,
- ✓ վստահորդների իրավունքների նկատմամբ հարգանքը, պաշտպանությունը և փաստաբանների գործունեության ազատությունը,
- ✓ փաստաբանական գաղտնիքի պաշտպանությունը,
- ✓ փաստաբանների կողմից փաստաբանական էթիկայի կանոնների խստիվ պահպանումը:

❖ **Փաստաբանների պալատի խնդիրները (նպատակները).**

Փաստաբանների պալատի խնդիրներն են՝

1. պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

2. կազմակերպել փաստաբանների արտոնագրման գործընթացը.

3. կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը.

4. վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից Օրենքի, Փաստաբանների պալատի կանոնադրության և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.

5. միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ.

6. Օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես ապահովել մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը.

7. նպաստել հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը:

❖ **Փաստաբանների պալատի տեսլականը.**

Փաստաբանների պալատի տեսլականը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական ինստիտուտի կայացումը և զարգացումը, ինչպես նաև փաստաբանության հեղինակության բարձրացումն ապահովելն է: Այդ գործընթացում առաջին հերթին անհրաժեշտ է՝

- ✓ Ապահովել Օրենքով փաստաբանների համար սահմանված երաշխիքների, ներառյալ՝ փաստաբանության անկախության պահպանումը.
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցներով ապահովել փաստաբանների իրավունքների, օրինական շահերի և մասնագիտական գործունեության պաշտպանությունը բոլոր



տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից)։

- ✓ Պատշաճ որակով ապահովել վաստաբանների շարունակական վերապատրաստումը՝ վաստաբանների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով։

■ **Փաստաբանների պալատի առաքելությունը.**

Փաստաբանների պալատի առաքելությունն ուղղակիորեն բխում է Փաստաբանների պալատի առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման անհրաժեշտությունից։

Փաստաբանների պալատը անկախ և ինքնակառավարվող մասնագիտական կառույց է, որն իր ուրույն դերն ունի գործուն իրավական դաշտի ձևավորման հարցում՝ որպես դատաիրավական համակարգի կայացման և արդարադատության իրականացման հետ ուղղակիորեն առնչվող ինստիտուտ։

Փաստաբանությունը՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ կոչված է նպաստելու Հայաստանի Հանրապետությունում կայուն արդարադատության համակարգի ձևավորմանը՝ հիմքում ունենալով իրավունքի գերակայության և մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի պահպանման սկզբունքները։

Որպես Փաստաբանների պալատի կարևորագույն նպատակ անհրաժեշտ է արձանագրել նաև Փաստաբանների պալատի և ընդհանրապես վաստաբանության ինստիտուցիոնալ կայունությունը և անկախությունը պահպանելու անհրաժեշտությունը։

* * *



2018 – 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

ԳԼՈՒԽ I. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

➤ Փաստաբանների պալատի աշխատակազմում արդեն իսկ ներդրված կառավարման, գործավարության և փաստաթղթաշրջանառության ժամանակակից էլեկտրոնային համակարգերի բարելավվում և շարունակական զարգացում:

* * *

ԳԼՈՒԽ II. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

➤ Փաստաբանների պալատի (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի) նյութատեխնիկական բազայի արդիականացում:

➤ Ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկության ապահովում և հաշվետվողականություն:

➤ Փաստաբանների պալատի պաշտոնների անվանացանկի հրապարակում:

➤ Փաստաբանների պալատի խոշոր (մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցող) գործարքների վերաբերյալ խորհրդի որոշումների հրապարակում՝ հաշվի առնելով բանկային, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակման համար օրենքով սահմանված սահմանափակումները:

* * *

ԳԼՈՒԽ III. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

➤ Եռամսյակային կտրվածքով Փաստաբանների պալատի կայքէջում ֆինանսական հոսքերի՝ մուտքերի և ծախսերի մասին տեղեկատվության շարունակական հրապարակում:

➤ Փաստաբանների պալատի կայքէջում նախատեսվող տեղական և արտասահմանյան գործուղումների մասին տեղեկությունների հրապարակում՝ ապահովելով հնարավորինս մեծ քանակությամբ փաստաբանների ընդգրկվածությունը, ինչպես նաև կառավարման ժամանակակից ծրագրերի



ներդնում, որով հնարավոր կլինի ապահովել փաստաբանների արդար մասնակցությունը Պալատի կողմից կազմակերպվող միջոցառումներին:

* * *

ԳԼՈՒԽ IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

❖ Հանրային պաշտպանության ինստիտուտի հետագա զարգացման և բարեփոխումների իրականացման ապահովում.

- Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ նաև ՀՊԳ) կարիքների գնահատում (մոնիտորինգ) և արդյունքների հանրայնացում (հրապարակում կայքէջում և այլ հանրային ցանցերում).
- Հանրային պաշտպանների թվաքանակի ավելացմանն ուղղված քաղաքականության վարում.
- Հանրային պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկության բարձրացում և մրցակցության եղանակների կատարելագործում.
- Հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովելուն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում.
- Հանրային պաշտպանների խրախուսման եղանակների ներդրում.
- Հանրային պաշտպանների ռոտացիոն համակարգի ներդնում՝ հաստիքների որոշակի տոկոսը սկսնակ փաստաբաններով համալրելու նպատակով.
- Անվճար իրավական օգնության որակի բարձրացում և սահմանված ընթացակարգերի նկատմամբ վերահսկողական կառուցակարգերի մշակում և ներդրում.
- Անվճար իրավական օգնության տրամադրման ընթացակարգերի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում նոր՝ առավել արդյունավետ և արդիական ընթացակարգերի սահմանում.
- ՀՊԳ ծանրաբեռնվածության բեռնաթափմանն ուղղված այլ ծրագրերի և կառուցակարգերի մշակում և իրականացում:

❖ ՀՊԳ հեղինակության բարձրացում.

- ՀՊԳ գործունեության լայն լուսաբանում, այդ թվում՝ հանրային պաշտպանների վարած գործերի և արձանագրված արդյունքների (արդարացումներ և այլ հաջողություններ) վիճակագրության շարունակական հրապարակում.
- Հանրային բնույթի միջոցառումների անցկացում, փորձի փոխանակման կարգով միջազգային կառույցների հետ հարաբերությունների հաստատում, այդ թվում՝ ՀՊԳ գործունեությանը և նյութատեխնիկական բազայի



արդիականացմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի նախագծում և իրականացում:

➤ Տարբեր տեղեկատվական հարթակներում անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ հանրությանն իրազեկում:

❖ ՀՊԳ պաշտպանների մասնագիտական որակների բարձրացում և շարունակական վերապատրաստման ապահովում.

➤ Հանրային պաշտպանների համար պարտադիր վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ ըստ մասնագիտացման և առավել հաճախ հանդիպող իրավական հարցերի.

➤ Օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ վերապատրաստման դասընթացների անցկացում:

❖ Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում.

➤ ՀՊԳ գործունեությանն օժանդակելու և հանրությանն անվճար իրավական օգնություն (խորհրդատվություն) տրամադրելու նպատակով անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու պատրաստակամություն ունեցող փաստաբանների՝ մշտապես գործող ցանցի ստեղծում.

➤ Pro bono մշակույթի զարգացում, այդ մշակույթի ամրապնդմանն ուղղված հնարավոր միջոցառումների, խրախուսման հնարավոր եղանակների ներդրմանն ուղղված միջոցառումների մշակում (հարկային բեռի նվազեցում տրամադրված անվճար իրավաբանական օգնությանը համաչափ և այլն).

➤ Անվճար իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանական գրասենյակների մասին տվյալների հրապարակում Փաստաբանների պալատի կայքում:

❖ ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում.

➤ ՀՊԳ կողմից վարած գործերի վիճակագրության հաշվետվությունների շարունակական հրապարակում Փաստաբանների պալատի կայքում.

➤ ՀՊԳ գործունեության մոնիտորինգի շարունակական իրականացում (այդ թվում՝ ՀՊԳ շահառուներին հանրային պաշտպանների աշխատանքը գնահատող հարցաթերթիկի տրամադրման և արդյունքների վերլուծության միջոցով).

➤ ՀՊԳ հաջողված պատմությունների, վերջին նորությունների, ռազմավարական դատավարությունների, վիճակագրության և այլ նյութերի հրապարակում Փաստաբանների պալատի կայքէջում:



* * *

ԳԼՈՒԽ V. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

➤ Մարզային համակարգողների և մարզային քաղաքների պատասխանատուների ինստիտուտի զարգացում.

➤ Փաստաբանների, այդ թվում՝ Փաստաբանների պալատի խորհրդի անդամների այցերի կազմակերպում մարզեր և մարզային քաղաքներ՝ տեղի փաստաբանների խնդիրների քննարկման և լուծման, ինչպես նաև տեղի բնակչությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով:

* * *

ԳԼՈՒԽ VI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

❑ **Փաստաբանների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ.**

➤ Փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, տարածում և քննարկումների կազմակերպում.

➤ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի և արագ արձագանքման հանձնախմբի աշխատանքների լուսաբանում, այդ թվում՝ հանձնաժողովի որոշումների, հայտարարությունների կամ այլ ակտերի հրապարակում.

➤ Ակումբի նիստերում փաստաբանների իրավունքների խախտման դեպքերի քննարկում և միջոցառումների իրականացում:

❑ **Փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման խոչընդոտների վերացում.**

➤ Փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման խոչընդոտների արձանագրում և վերացման համար անհրաժեշտ միջոցառումների անհապաղ ձեռնարկում.

➤ Փաստաբանների՝ իրավաբանական օգնության համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու դիմումների մերժումների վերլուծում և անհիմն մերժումների վերաբերյալ պաշտոնական արձագանքում.

➤ Փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման խոչընդոտների վերացման նպատակով ռազմավարական դատավարությունների կազմակերպում.



➤ Փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարմանն առնչվող օրենսդրական նախագծերի մշակում:

❖ Փաստաբանական գործունեությանն ու փաստաբանների միասնականության ամրապնդմանն առնչվող այլ միջոցառումներ.

➤ Փաստաբանական գործունեությանն առնչվող օրենքների փոփոխությունների վերաբերյալ դիրքորոշումների ներկայացում իրավասու մարմիններին:

➤ Պետական մարմինների կողմից փաստաբանների մասնագիտական պրակտիկան վերահսկելու ցանկացած փորձի արձանագրում, վերլուծում և համարժեք պաշտպանության միջոցների կիրառում:

➤ Փաստաբանների միասնականությունը պառակտելուն ուղղված փոքրաթիվ փաստաբանների նախաձեռնությունների պատճառների վերհանում և փաստաբանների միասնականությունն ամրապնդող միջոցառումների իրականացում:

* * *

**ԳԼՈՒԽ VII. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՏԵՆՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ**

❖ Փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների ակումբի ստեղծում.

➤ Փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների հետ քննարկումների պարբերական կազմակերպում.

➤ Այլ պետության փաստաբանական գրասենյակների ցանցերում ընդգրկվելու նպատակով Հայաստանի փաստաբանական գրասենյակներին անհրաժեշտ օժանդակության ապահովում.

➤ Փաստաբանական գրասենյակների զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ անհրաժեշտ օրենսդրական նախագծերի մշակում.

➤ Փաստաբանական գրասենյակների կառավարման վերաբերյալ այլ պետությունների փաստաբանական գրասենյակների հետ փորձի փոխանակում.

➤ Փաստաբանական գրասենյակի կառավարման թեմայով վերապատրաստման դասընթացների շարունակական կազմակերպում:



❖ Փաստաբանական գործունեություն իրականացնելիս ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում.

- Չարգացած պետություններում փաստաբանական գործունեություն իրականացնելիս կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների ուսումնասիրություն և առաջարկությունների փաթեթի կազմում.
- Փաստաբանական գործունեության իրականացմանը և փաստաբանական գործի վարմանն օժանդակող համակարգչային ծրագրի մշակում և տրամադրում փաստաբաններին.
- Փաստաբանի աշխատանքում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ ուսուցողական դասընթացների կազմակերպում:

❖ Փաստաբանական գրասենյակների էքսպո-ցուցահանդեսի կազմակերպում:

* * *

**ԳԼՈՒԽ VIII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**

- Փաստաբանների վերապատրաստման համակարգի շարունակական զարգացում.
- Օտարերկրյա փորձի ուսումնասիրություն և տեղայնացում.
- Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պարբերական արդիականացում՝ հաշվի առնելով նաև փաստաբանների պահանջմունքները.
- Վերապատրաստման գործընթացում փաստաբանների կարիքների բացահայտում և վերապատրաստման արդյունավետության գնահատում.
- Հայաստանի Հանրապետության մարզերում փաստաբանների վերապատրաստման կարիքների գնահատում և հնարավորության վերլուծություն.
- Վերապատրաստման դասընթացների առցանց և հեռավար համակարգերի զարգացում և լայն կիրառություն.
- Օտարերկրյա փաստաբանական դպրոցների հետ փորձի փոխանակման իրականացում.
- Վերապատրաստման դասընթացներ կազմակերպող հաստատությունների և դասընթացավարների հավատարմագրման չափորոշիչների և այլ պահանջների շարունակական կատարելագործում.
- Վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի շարունակական իրականացում:



* * *

ԳԼՈՒԽ IX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ

- Միջազգային համագործակցության դաշտի ընդլայնում՝ նոր գործընկերների հետ համագործակցության հարաբերությունների հաստատման միջոցով.
- Գործընկեր կառույցների հետ փաստաբանական ինստիտուտի զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում.
- Փաստաբանական ինստիտուտի վերաբերող տարաբնույթ թեմաներով համաժողովների, կոնֆերանսների, սեմինար-քննարկումների և այլ միջոցառումների նախաձեռնում.
- Օտարերկրյա գործընկերների հետ հանդիպումների կազմակերպում, այդ թվում՝ նրանց հրավերով:

* * *

ԳԼՈՒԽ X. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

■ Մասնագիտական էթիկայի չափորոշիչների համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին.

- Զարգացած երկրների փաստաբանական էթիկայի կանոնների ուսումնասիրություն և տեղայնացում.
- Փաստաբանի վարքագծի կանոնագրքի լրամշակում և արդիականացում՝ հաշվի առնելով Փաստաբանի վարքագծի կանոնագրքի դրույթների խախտման վերաբերյալ վերլուծությունները:

■ Փաստաբանի վարքագծի կանխատեսելիությանն ուղղված միջոցառումների իրականացում.

- Փաստաբանների պալատի խորհրդի կարգապահական գործերով որոշումների շարունակական հրապարակում Փաստաբանների պալատի կայքում.
- Փաստաբանների պալատի խորհրդի կարգապահական գործերով որոշումների ժողովածուի ստեղծում և խորհրդատվական պարզաբանումների հրապարակում.
- Փաստաբանների վարքագծի հարցերի վերաբերյալ քննարկումների կազմակերպում: Տարբեր ձևաչափերով փաստաբանների էթիկայի հարցերի թեմատիկ քննարկումների կազմակերպում միասնական պրակտիկայի խթանման համար:



* * *

ԳԼՈՒԽ XI. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրինագծի մշակում.
- Փաստաբանների հարկային բեռի նվազեցման տեսանկյունից հարկային օրենսդրության բարեփոխումների մասով օրինագծի մշակում.
- Փաստաբանական գործունեությանն առնչվող այլ իրավական ակտերի նախագծերի մշակում:

* * *

ԳԼՈՒԽ XII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՁՈՐԱՑՈՒՄ

- ❑ Գիտավերլուծական կենտրոն
- ❑ Երիտասարդական խորհուրդ
- ❑ Ակումբ
- ❑ Մարզամշակութային ակումբ
- ❑ Հանձնախմբեր, հանձնաժողովներ և աշխատանքային այլ խմբեր

Նշված կառույցների ինստիտուցիոնալ զարգացման ապահովում, այդ թվում՝ Գիտավերլուծական կենտրոնի եզրակացությունների հրապարակում Փաստաբանների պալատի կայքում, Ակումբի միջոցով քննարկումների ակտիվացում, փաստաբանների համար մարզամշակութային միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև՝ մարզական միջոցառումների կազմակերպում փաստաբանների և այլ կառույցների (քննիչներ, դատախազներ և այլն) միջև:

* * *

ԳԼՈՒԽ XIII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

- Փաստաբանների պալատի կայքէջի շարունակական վերազինում և արդիականացում:
- Հանրությանն առավել հետաքրքրող թեմաների շուրջ հոդվածների տպագրում.
- հանրությանն առավել հետաքրքրող թեմաների շուրջ հեռուստահաղորդումների կազմակերպում.
- Փաստաբանների պալատում և տարածքային



ներկայացուցչություններում բաց դռների անցկացում.

➤ Փաստաբանների պալատի կայքէջի կամ սոցիալական ցանցի միջոցով քննարկումների (ֆորումների) իրականացում.

➤ Փաստաբանական դպրոցի դերի և ընդունելության մասին իրազեկում հնարավոր շահառուների շրջանակներում:

➤ Արտաքին աշխարհի և շահագրգիռ կողմերի հետ Փաստաբանների պալատի ունեցած կապերի ընդլայնում և քննարկումների հաճախականության ավելացում.

➤ Զանգվածային լրատվամիջոցների հետ կապերի շարունակական ամրապնդում.

* * *

ԳԼՈՒԽ XIV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

➤ Ընդունելության քննությունների պահանջների խստացում.

➤ Հակակոռուպցիոն քարոզի շարունակական իրականացում ունկնդիրների շրջանակում.

➤ Մասնագիտության կրթական ծրագրերի շարունակական արդիականացում և համապատասխանեցում միջազգային պահանջներին.

➤ Փաստաբանական դպրոցում կրթական ծրագրերի և դասախոսների ընտրության չափանիշների կատարելագործում.

➤ Ուսումնառության գործընթացի համար անհրաժեշտ և կիրառվող նյութատեխնիկական բազային արդիականացում.

➤ Փաստաբանական դպրոցում ընդունելության քննությունների, ընդհանուր ուսումնական գործընթացի (այդ թվում՝ փորձուսուցման), ինչպես նաև որակավորման քննությունների մոնիտորինգի շարունակական իրականացում և վերլուծություն:

* * *

ԳԼՈՒԽ XV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

➤ **Շարունակական բնույթ կրող հասարակական ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում.**

➤ «Իրազեկ բանակ» փաստաբանական ծրագիր.

➤ «Իրազեկ դպրոց» ծրագիր.

➤ Իրավագիտության ֆակուլտետների ուսանողների ընդունելություն.

➤ Փաստաբանների պալատում արդեն իսկ ավանդական դարձած նախաձեռնությունների և միջոցառումների իրականացում:



■ **Անդամավճարների հետ կապված հարցեր.**

- Անդամավճարների չափի ավելացման բացառմանն ուղղված քաղաքականություն.
- Սահմանամերձ համայնքների փաստաբանների անդամավճարի չափի նվազեցում:

* * *